

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶՅԱՆԸ՝ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ*

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Քանայի բառեր՝ Կ. Պոլիս, Թովմաս Թերզյան, Արշակ Չոպանյան, մանկավարժ, բանաստեղծ, թարգմանիչ, թարգմանիչ:

Ամփոփում

Արևմտահայ ականավոր գրող, քննադատ, հրապարակագիր, թարգմանիչ, ազգային-մշակութային գործիչ Արշակ Չոպանյանը (1872–1954) ավագ սերնդի նույնքան նշանավոր բանաստեղծ, թատերագիր, թարգմանիչ, գեղագետ ու մանկավարժ Թովմաս Թերզյանի (1840–1909) անձի և գործի վերլուծությանն ու գնահատությանն անդրադարձել է բազմիցս՝ սկսած 1890-ական թվականների սկզբից, քառորդ դարի ընթացքում: Տարբեր առիթներով գրված այդ անդրադարձները ներառում են ինչպես Թերզյանի կենսագրությանը, անհատական նկարագրին, մանկավարժական ունակություններին, ստեղծագործություններին նվիրված հոդվածներ, այնպես էլ ծավալուն հետազոտություններ և չափածո խոսք՝ քերթված: Ի վերջո, այդ ամենը նա ընդհանրացրել է Թ. Թերզյանի «Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ»-ի (1929, Վենետիկ) Առաջաբանում:

Նախաբան

Թ. Թերզյանի ստեղծագործական անհատականության և գրական վաստակի գնահատության առանցքը, ըստ Ա. Չոպանյանի, ընդգրկում է մանկավարժությունն ու բանաստեղծությունը: Նրա առաջին ծանոթությունն ու առնչությունները Թ. Թերզյանի հետ տեղի են ունեցել 1880-ականների երկրորդ կեսին՝ Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանում ուսանելու տարիներին (1887–1891): Վարժարանի՝ մեծ ճանաչում և համբավ ունեցող ուսուցիչների՝ Մատաթիա Գարագաշյանի, Գարեգին Սրվանձտյանի, Եղիա Տեմիրճիպաշյանի, Մաղաքիա Օրմանյանի, Մինաս Չերազի և այլոց թվում էր նաև Թովմաս Թերզյանը: Վերջինս մեծ դեր է խաղացել իր ուսանողների, այդ թվում՝ Ա. Չոպանյանի ստեղծագործական անհատականության՝ ազգային, ընկերային գաղափարների ձևավորման, աշխարհայացքային ունակությունների զարգացման

* Ներկայացվել է 11. III. 2026 թ., գրախոսվել է 22. III. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

© Հեղինակ/ներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

գործում: Նա ոչ միայն ուսուցանում էր բանաստեղծության արվեստը, այլև բացահայտում դրա բուն էությունը, բանաստեղծների հոգին: Ահա թե ինչու, իրատեսորեն գնահատելով ուսուցչի ներդրումը նաև թարգմանության, թատերագրության և այլ ասպարեզներում, Ա. Չոպանյանն ամենից մնայունը համարում էր մանկավարժի դերն ու բանաստեղծի ինքնատիպ էությունը:

«Արդիւնաւոր» մանկավարժը

Իր ողջ կյանքի ընթացքում Ա. Չոպանյանը մեծ երախտագիտությամբ և կարոտով է հիշել ուսանողության շրջանում Կեդրոնականում տիրող առինքնող մթնոլորտն ու գիտական-կրթական բարձր մակարդակը: Առանձնակի ջերմությամբ են շնչում, մասնավորապես, նշանավոր բանաստեղծ, թատերագիր, թարգմանիչ, գեղագետ և մանկավարժ Թ. Թերզյանին նվիրված տողերը: «Մէկէ աւելի հայ սերունդներ իրմէ սորված են սիրել, ըմբռնել, ճաշակել գեղարուեստն ու գրականութիւնը, – գրում է նա: – ... Թերզյանի արուեստագետներէն, գրագետներէն շատերը իր աշակերտներն եղած են: Ես ինքս՝ իրեն շատ բան կը պարտիմ: Երբէք պիտի չմոռնամ իր դասերը Կեդրոնականին մէջ»¹: Պատճառներից մեկն այն էր, շարունակում է Չոպանյանը, որ Թերզյանը ««փրոֆէսորի» ծանր ու հաւակնոտ տիպարը չէր» և նրա դասերը «դասեր» չէին սովորական իմաստով, այլ «արուեստագետի մը խօսուղոտութեն», որով «ուսուցչութենէն վեր բան մըն էր իր ըրածը»: Օրինակ՝ շատ դեպքերում մանրամասն ու երկար քննություն-բացատրությունների փոխարեն, «... կ'առնէր երոպացի մեծ բանաստեղծի էջ մը ու կը կարդար, ու կը մեկնէր, կ'ապրէր զայն, ու մեր հոգոյն ու մտքին մէջ թափանցել կուտար անոր գեղեցկութիւնը ...»: Այսինքն՝ «մեծ բանաստեղծ մըն էր որ մեծ բանաստեղծներու հոգին մեզի կը բանար»: Չոպանյանի զգայուն ընկալումներում առանձնապես տպավորվել են ուսուցչի դեմքը, արտահայտիչ շարժումները. «Ա՛խ. անպատմելի գեղեցկութիւնը զոր իր դէմքը՝ արդէն ա՛յնքան գեղեցիկ՝ կը զգենուր այդ պահերուն, – անթաքույց կարոտով բացականչում է նա, – գանգուր մագերով պսակուած լայն ճակատը աւելի կը լայննար, դէմքին գծերը կ'այլափոխուէին, կը լուսավառէին, ներքին անճառ բերկրութիւնով մը կը ծաղկէին»: Հատկապես տպավորիչ էին ուսուցչի աչքերը՝ «գեղեցկին գինովութեամբը ճաճանջաւորուած», «ամբողջ դասարանը ընդգրկող սաւառնագին նայուածքը» ու նաև՝ «նուրբ, բարեշնորհ մարդու աննման ժեսթերը՝ պարզ, փափուկ ու գողտոր», որ ստորագծում էին «իր խանդոտ, սրամիտ, ընտանի ու խորթափանց, հմայող, համոզող ու սնուցանող խօսքը»: Աննման այդ հրապույրից, վկայում է Չոպանյանը, իրենց «բռնուած» էին զգում նույնիսկ «ամէնէն քիչ գրասէր» ուսանողները, որոնք ևս «արբշիռ՝ մտիկ կ'ընէին, ու կը սորվէին սիրել գրականութիւնը»: Եվ դա դեռ բավարար չէր. գրականությունից բացի, Թերզյանը սովորեցնում էր նաև «կեանքի գեղարուեստը, քաղաքավարութիւնը», որի «անհրաժեշտութիւնը զգացնող ամէնէն ազդեցիկ ուսուցիչն եղած է ինք մեր մէջ»²:

¹ «Անահիտ» (Փարիզ), 1909, թիվ 1–2, 38:

² «Անահիտ», 1909, թիվ 1–2, 38–39:

Չոպանյանը խոստովանում է, որ ընդհանուր այդ տպավորություններից բացի, Թերզյանն առանձնահատուկ դերակատարություն է ունեցել իր անձնական կյանքում, անհատական նկարագրի ձևավորման մեջ: «Կեդրոնականի իր այդ դասերու տպաւորութեան տակ զոր կրած եմ բոլոր ընկերներուս հետ, – գրում է նա, – ... ու նաեւ այն հայրական մտերմութենէն զոր վարժարանին մէջ իսկ, հաճելով տեսնել իմ մէջս գրական որոշ խոստումներ, ինք շնորհեց ինծի և որով ինծի այնքան թանկագին խրախուսանք մը տուաւ և առաջին քայլերուս մէջ իմ վրաս աւելի վստահ ըլլալու օգնեց ինծի»: Ավելի մանրամասնելով այդ օգնության դրսևորումները՝ պատմում է, որ ուսուցիչ Թերզյանը «... մերթ կ'առնէր իմ բանաստեղծական մէկ փորձս տուն կը տանէր և մանրակրկիտ սրբագրութիւններով կը բերէր ինծի», երբեմն էլ տուն է հրավիրել, երկարորեն խոսել «իր նախընտրած հեղինակներուն վրայ», պատասխանել իր հարցումներին կամ «բարերար խստութեամբ մը» ցույց տվել իր գրվածքներից մեկի թերությունները³: Այդ իմաստով նա մեծապես պարտական էր զգում իրեն, քանի որ «Բաց ի Կեդրոնականի դասերէն, ինքը՝ հայրական համակրութեամբ մը՝ զոր կեանքիս մեծագոյն պատիւներէն մին կը համարիմ, իմ առաջին քայլերուս մէջ զիս քաջալերած, թերութիւններս ուղղած, ինծի առաջնորդ ու զօրավիգ է եղած»: Եվ նա մեծագոյն երախտագիտութեամբ է հիշում «իր վարպետ արուեստագէտի խրատները, իր անթերի ճաշակով գրագէտի ցուցմունքները, իր սէրը, իր խրախուսանքը», որոնք բարերար ներգործություն են ունեցել իր ներաշխարհի ձևավորման վրա: Ահա թե ինչու իրեն մշտապես համարել և համարում է «իր խոնարհ ու շնորհապարտ աշակերտը»⁴:

Որ Կեդրոնականի մեծանուն մանկավարժները՝ այդ թվում, անկասկած, նաև Թերզյանը, փոխադարձաբար բարձր են գնահատել պատանի Չոպանյանի կարողություններն ու արվեստագիտական ձիրքը, վկայում է նաև վերջինիս ավագ մտերիմներից Լևոն Բաշալյանը՝ 1898 թ. հունվարի 10-ին նրան ուղղած նամակում. «Գովեստներով իմացեր էի միշտ Ձեր անունը Ձեր ուսուցիչներէն»⁵, – գրում է նա:

Թ. Թերզյանը, հիմնական դասախոսություններից բացի, նաև ժամանակի գրական անցուդարձերի վերաբերյալ կարևոր ու հիշարժան տեղեկությունների աղբյուր էր գրասեր ու գեղասեր ուսանողների համար: Ժամանակի «... պոլսահայ համայնքին նշանաւոր մէկ դէմքը» հանդիսացող, պետական, ազգային և մշակութային գործիչ Թ. Թերզյանի աներորդի Հովհ. Սագրեյանին⁶ նվիրված դիմանկար-հոդվածում Չոպանյանը հիշատակում է, որ վերջինս բարձր

³ Թ է ր գ ե ա ն. 1929, հ. I, ԻԴ:

⁴ «Անահիտ», 1909, թիվ 1-2, 38-39:

⁵ Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 16:

⁶ Հովհ. Սագրեյանը եղել է «օսմանեան Արտաքին Գործոց Նախարարատան թարգմանութեան գրասենեակի» պաշտոնյա, մամուլի տեսուչ, «Հանրային Կրթութեան Նախարարատան թարգմանութեան եւ շարադրութեան խորհրդի անդամ»: Թ. Թերզյանն ամուսնացել էր Հովհ. Սագրեյանի քրոջ դստեր՝ Սաթենիկի հետ: Ավելի մանրամասն տե՛ս՝ Չոպանեան Ա. Յովհաննէս Սագրեյան, «Անահիտ», 1934, թիվ 5-6, 1-18:

էր գնահատում Մ. Պեշիկթաշլյանի և Ռ. Պատկանյանի նման ազգային նվիրյալ բանաստեղծների մարդկային ու ստեղծագործական արժեքը: Եվ երբ 1887-ին Գամառ-Քաթիպան ժամանել էր Կ. Պոլիս և մի քանի շաբաթ մնացել, Հովհ. Սազրզյանը հաճախ էր իր տան մեջ «եղբայրաբար» հյուրասիրել ու պատվել նրան: «Մենք՝ Կեդրոնականի աշակերտներս, – այդ մասին պատմում է Չոպանյանը, – մեր ուսուցիչ Թէրզեանէն իմացանք այն օրերուն եւ ատոր համար խորունկ սէր մը զգացինք այդ պետական պաշտօնատարին հանդէպ՝ որ այդպիսի ազնիւ ու քաջ ժեսք մը կ'ունենար ապստամբաշունչ հայ գուսանին համար»: Նույն կերպ, «Կեդրոնականի իր դասերէն մէկուն ընթացքին», Թերզյանը պատմել է ուսանողներին, որ Պետրոս Աղամյանի՝ Կ. Պոլիս այցելության օրերին «Սազրզեան, իրեն հետ միասին գացած ըլլալով *Օթելլօ*ի այն ներկայացման զոր Բերայի յոյն թատերախումբը կազմակերպած էր ի պատիւ Աղամեանի» և ուր Աղամյանը հայերեն, իսկ հույն դերասանները հունարեն էին կատարում իրենց դերերը, Սազրզյանը «... զմայլած Աղամեանի բերնին մէջ հայերէնին ստացած ներդաշնակութենէն եւ ուժգին գեղեցկութենէն», ասել էր իրեն, թե «Հայերէնը աւելի աղւոր, աւելի ճոխ կը հնչէ քան յունարէնը ...»⁷:

Ա. Չոպանյանի հիշողության մեջ հաճելիորեն տպավորվել է նաև 1891 թ. Կեդրոնականի առաջին շրջանավարտների պարզևաբաշխության հանդեսը, որում վարժարանի մեկ այլ՝ «սիրուած ու յարգուած», «մեծ ուսուցիչներէն» մեկի՝ Եղիա Տեմիրճիպաշյանի «յուզիչ» ճառից հետո Թերզյանն ընթերցել է իր «այնքան սիրուն տաղը հայրական գորովի գերազնիւ ոգով մը և գաղափարապաշտ, արի, լաւատէս շունչով մը թրթռուն, «Բարի՛ յաջողուած», ուր վեհ բանաստեղծն ու վարպետ ուսուցիչը կը միանան՝ նոր սերունդին առողջ ու բարի առաջնորդի իրենց դերը քնարերգական լուսաւոր էջի մը մէջ բանաձեւելու համար»⁸:

Այդ ամենից հետո միանգամայն տրամաբանական էր, որ Կեդրոնականն ավարտելուց մեկ տարի անց՝ 1892-ին, որպես Արփ. Արփիարյանի հիմնած «Հայրենիք» օրաթերթի ակտիվ աշխատակից ու մի քանի տպավորիչ հրապարակումների, բանաստեղծական ժողովածուների հեղինակ, արդեն որոշակի ճանաչում ունեցող Չոպանյանն իր բողոքի ձայնն է բարձրացնում Թերզյանին «ֆրանսերէն թարգմանութեան ուսուցիչ» պաշտոնից հեռացնելու կապակցությամբ՝ իր այդ դիրքորոշումը հիմնավորելով նրանով, որ վարժարանի Խնամակալությունը նախ շատ մեծ սխալ էր գործել «առաջին օրէն (...) գրական պատմութեան դաս մը» նրան չհանձնելով, որի (և ուսանողների կրթության հմտությունների) մեծ գիտակ էր ու «գրագիտութեան պատուական ուսուցիչ մը կրնար ըլլալ»: Խնամակալության ուշադրությանը հանձնելով «դեռ իր սխալն ուղղելու» առաջարկը՝ նա նշում է, որ հակառակ պարագային անգամ գոհ է իր կարծիքն արտահայտելու համար, որը, ըստ իրեն, «գէթ երախտագիտութեան պարտքի մը հատուցումն է իմ վարպետներէս մէկուն, որուն շատ բան կը պարտիմ»⁹:

⁷ «Անահիտ», 1934, թիվ 5–6, 14–16:

⁸ Թ է ր գ ե ա ն. 1929, հ. I, ԻԴ:

⁹ «Հայրենիք» (Կ. Պոլիս), 28. IX. 1832:

«Գերազանցապես ինքնատիպ» բանաստեղծը

Թ. Թերզյանը բեղուն ու բազմաժանր ստեղծագործող հեղինակ է, ահա թե ինչու, Չոպանյանի տեսակետով. «Ինչ որ պիտի մնայ Թերզեանէն յաւիտենապէս կենդանի ու գեղեցիկ, իր մեծ ուսուցչի դերին յիշատակն է, և ասկից ալ ասելի՝ իր միանգամայն ներշնչող ու արուեստագէտ բանաստեղծի թանկագին գործն է»¹⁰: Անաչառորեն գնահատելով եվրոպական պոեզիայից Թերզյանի կատարած թարգմանությունները¹¹, գրած թատերգություններն ու դասագրքերը¹² Չոպանյանը գտնում է, որ, այնուամենայնիվ, «Թերզեանի գրական փառքը իր բանաստեղծութեանց մէջ է: Հոտ ինքը մին է մեծագոյններէն որ հին ու նոր ատեններուն երեւցած են Հայոց մէջ»: Նա «անճիշդ» է համարում ոմանց կողմից արտահայտվող «նմանողութեան մեղադրանքը»՝ հաստատելով, որ «Թերզեան բանաստեղծը գերազանցապես ինքնատիպ է», քանի որ թեև նրա քերթվածներում, անշուշտ, զգացվում են օտար՝ հիմնականում եվրոպական բանաստեղծներից «բազմազան ազդեցություններ», սակայն դրանց մեծագույն մասի մեջ տիրում են «հեղինակին անձնական խառնուածքը, յատուկ զգայնութիւնը, սեփական աշխարհայացքն ու ճաշակը»¹³:

Չոպանյանն առարկում է նաև մեծ տարածում գտած այն կարծիքին, թե «Թերզեան շնորհի ու փափկութեան երգիչ մըն է, կորովի ու բարձր թռիչքէ զուրկ», թե միայն «սիրերգու մը կամ եղերերգակ մըն է, որուն գործին մէջ մտածումը քիչ տեղ ունի» կամ «ասելի աշխարհաքաղաքացի է քան Հայ», վերջապես, «անցեալի ճարտար ու ներշնչեալ ոգող մըն է, հին գրական բանաձեւերու յարած և զանոնք տաղանդով կիրարկող բանաստեղծ մը, որուն մեր ժամանակի ոգին ու ճաշակը օտար մնացած են»: Ընդ որում՝ ըստ նրա՝ այս պնդումներն անողներից շատերը ոչ միայն ծանոթ չեն եղել Թերզյանի «քերթողական գործին ամբողջութեան», այլև ուշադրությամբ չեն կարդացել «նոյն իսկ տպուած բազմաթիւ էջերը՝ որ արդէն իսկ ա՛յնքան այլազան են ...»: «Թերզեան ի ծնէ բանաստեղծ մըն է, – համոզված է Չոպանյանը, – զոր բնութիւնը յորինած է երգելու համար»: Ապացույցներից մեկն այն է, որ նրա քերթվածներն աչքի են ընկնում ներդաշնակությամբ, ներքին ռիթմով ու երաժշտականությամբ: Չոպանյանի վկայությամբ՝ «Պէտք է, կ'ըսէր իր մտերիմներուն,

¹⁰ Թ է ր գ ե ա ն. 1929, հ. I, ԼԹ:

¹¹ «Թերզեան մեր լաւագոյն թարգմանիչներէն մին ալ եղած է, իր «Անակրէոնի Տաղեր» ու գրաբար ոտանաւոր հայացումը գոհար մըն է» (Թ է ր գ ե ա ն. 1929, հ. I, ԽԹ): Զմայելի են նաև Թովմաս Մուրից, Տասսոյից, Հյուգոյից, Լոնգֆելլոյից և ուրիշներից կատարած թարգմանությունները:

¹² «Իր թատերգութիւնները զուրկ չեն որոշ գրական յատկութիւններէ, բայց նմանողութիւնը անոնց մէջ բաւական տիրող տեղ կը բռնէ», «Իր դասագրքերը օգտակար եղած են, բայց հետետողութեամբ յորինուած գրքոյկներ են՝ գրականութեան հետ քիչ կապ ունեցող» (Թ է ր գ ե ա ն. 1929, հ. I, ԼԹ):

¹³ Թ է ր գ ե ա ն. 1929, հ. I, ԽԹ:

երաժշտական զգացում ունենալ գեղեցիկ ոտանավորներ գրելու համար. տողերուն կշռութիւնը մարդ պէտք է ականջին մէջ ունենայ ...»¹⁴: Նա «բնագրական ու միամիտ» չէ, այլ «իւր զգացմանց տիրող, զանոնք վարող», «ներշնչեալ», բայց նաև «գիտակից ու ինքնատիպ բանաստեղծ մը՝ դժուարահաճ ճաշակով, նրբախոյզ արուեստով»: Նրա քերթվածների մեծ մասի մեջ «անձնական ներշնչման մը հուրը կայ. անկեղծ զգայնութիւն մը, մերթ փափուկ ու թեթեւ, մերթ խոր և ուժգին, կ'ոգեւորէ զանոնք»: Բայց կա նաև այդ ամենին տիրող, «որոշ աշխարհայացք մը, սեփական մտածողութիւն մը ...»¹⁵: Չոպանյանն այդ մտածողության էական տարրերից է համարում ազգային՝ հայկական միջուկի առկայությունը: Առարկելով այն տեսակետին, թե Թերզյանն իր քերթվածներում մեծ նախորդներից ավելի քիչ տեղ է հատկացրել «հայ ցեղին հին ու նոր պատմութեան», ինչպես նաև ժամանակակից ազգային բաղձանքներին, ցավերին ու պայքարներին՝ գտնում է, որ եթե «բնաւ իսկ տեղ տուած չըլլար ատոնց նորէն իրաւունք պիտի չունենայինք ատիկա մեղադրել իրեն»: Այդ համոզմունքը հիմնավորելով ոչ միայն նրանով, որ նույն «մեղադրանքը» կարելի է տալ նաև իրենց ազգերի պարծանքը հանդիսացող մի շարք բանաստեղծների (Բողկեր, Վեռլեն, Վինյի, Մյուսե, դը Լիլ, Գոթիե և այլք), այլև՝ որ Թերզյանը ևս «մեծ հայ բանաստեղծ մ'ըլլալու անգին ծառայութիւնը մատուցած է մեզի»: Բանն այն է, նշում է Չոպանյանը, որ «Թէրզեան՝ մարդը ի նկատի ունեցած է քան Հայը մասնաւորապէս, տիեզերական կեանքն ու ամբողջ մարդկութեան ճակատագիրն արտայայտել յաւակնած է – ճիշդ ինչ որ հայ բանաստեղծութիւնն այնքան քիչ է ըրած»: Այլ խոսքով՝ «Իր մտայնութեան մէջ տիրական է համամարդկային տեսիլը և ատոր համար իր բանաստեղծութեան տարողութիւնը աւելի մեծ է ու տեսական»: Ահա թե ինչու համոզված է, որ նրա «լաւագոյն էջերը թարգմանուելով *n* և է օտար բարձր հասարակութիւն կրնան շահագրգռել»: Այլ հարց է, ըստ Չոպանյանի, որ «այդ համամարդկային աշխարհայացքը» արտահայտվում է բանաստեղծի անհատական խառնվածքի միջով, որով և յուրաքանչյուր էջի մեջ «կը զգացուի թէ այդ խառնուածքը Հայու մըն է որ Պոլսոյ մթնոլորտին մէջ ծնած ու ապրած, Վենետիկեան միջավայրին մէջ ու Միսիթարեանց շունչին տակ կազմուած է ու *եվրոպական* արուեստի, գլխաւորապէս *յոյն-լատին* արուեստի, ազդեցութիւններով առաջնորդուած է»: Թերզյանն իր քերթվածներում «խանդավառականքով» բազմաթիվ անդրադարձներ է կատարել հայոց անցյալի «նշանակալից, վեհ, սխրալի կամ յուզիչ» դրվագներին, պատմական անհատներին՝ «Ազատութեան նախամարտիկ հերոս» Հայկին, «Հայ-Հերակլէս» Վահագնին, հայրենական ու ընտանեկան սրբությունների «անձնագրի պաշտպան» Արային¹⁶... Վերջապէս, չափազանց բնորոշ են «խոր ու ազնիւ զգացումով մը տոգորուած» այն մի քանի էջերը, «զոր գրած է իր օրով պայթող հայկական ողբերգութեան մասին իր ներքին վրդովմունքն արտայայտելու համար»: «Դահիճ Սուլթան

¹⁴ Թ է ր զ Ե ա ն. 1929, հ. I, ԼԵ:

¹⁵ Թ է ր զ Ե ա ն. 1929, հ. I, ԽԱ:

¹⁶ Թ է ր զ Ե ա ն. 1929, հ. I, ԽԲ:

Համիտը խարանող» բոլոր քերթվածների մեջ Չոպանյանն առանձնացնում է «*Խարազանը* և *Այգին* հոյակապ վերջաբանը»: Եվ ապա՝ «Ինչքան ուժեղ է իր փափուկ գայրոյթին մէջ՝ գերման կայսրուհւոյն ուղղուած վրէժխնդիր տաղը ...» («Կայսրուհիդ մեծազօր ...»): Կամ՝ «... ինչ սրտայոյզ, թանկագին էջ է այն, – գրում է Չոպանյանը, – զոր իր հիւանդ դողդղացող մատներով խազխազած է 1908ին՝ կարծելով թէ թոպէն եկած էր ուր իր հօրը ցեղը, իր ցեղը, որուն զարգացմանը ա՛յնքան տարիներ աշխատած էր, որուն մշակոյթ իր բերած գանձերով ճոխացուցած էր, վերջապէս գերեզմանէն յարուփին կ'առնէր իբր նոր Ղազարոս մը»¹⁷: Նրա բանաստեղծության մեջ հաճախ են երևում նաև «շնորհալին, փափուկը, քնքուշը» և այդ տեսակետից Թերզյանը «գերազանց է իրմէ առաջ մեր ունեցած բոլոր բանաստեղծներէն»: Երգել է նաև «երիտասարդութեան կրակները, երազները, տենչերը, սիրոյ ամբողջ վէպն իր հեշտանքներով ու դառնութիւններով», բնությունն ու նրա հրաշալիքները ...

Այդուհանդերձ, Չոպանյանը, այդ ամենից առավել, Թերզյանի ստեղծագործության «կարեւորագոյն բաժինն» է համարում այն քերթվածները, «ուր հոգին ու Աստուած կ'երգէ» կամ «մարդկային կեանքին ու ամբողջ տիեզերքի կեանքին վրայ արձըկուած իր մտածումը կ'արտայայտէ»՝ արձանագրելով, որ այդ ամենին քաջաձանոթ լինելուց հետո «այդ մտածումը մօտէն ուսումնասիրող մը պիտի չըսէ այլ եւս թէ Թէրզեան անցեալի երգիչ է լոկ»: Մեկնաբանելով ինքնատիպ բանաստեղծի «մտածման տիրող գիծը» հանդիսացող ոգեպաշտությունը, որի հիմքը հոգու անմահության գաղափարն է, իսկ նյութը սոսկ «ծառան է հոգիին»՝ միաժամանակ վերապահում է, թե դա «աժխաժաճառին կոյր հաւատքը չէ, ոչ ալ Ս. Գրքերու տառին կառչած մոլեռանդ մտքի մը չոր ու անձուկ քլիշէներու յարումը»: Ըստ նրա՝ Թերզյանը բնագրերով կարդացած և քաջաձանոթ է իր ժամանակի գիտունների և իմաստասերների, ընդ որում՝ ոչ միայն կրոնաշունչ ու ավանդապաշտ, այլև ազատամիտ մտածողների հայացքներին, և «ատոնց մէջէն նախընտրած է անոնք որ գիտութիւնը և հոգւոյն ու Աստուծոյ գոյութեան հաւատքը կը հաշտեցնեն»: Այսինքն, ընդգծում է Չոպանյանը. «Իր ոգեպաշտութիւնը իմաստասիրական հիմք մը ունի և գիտութեան չի հակադրեր ինքզինքը»: Դրանով իսկ «այդ հաւատացեալը» երբեք աչք չի փակել աշխարհում կատարվող անարդարությունների ու անիրավությունների, «տիեզերքին մէջ տիրող Չարին գործած անվերջ ոճիրներուն ...»¹⁸:

«Էապէս ռոմանթիկ» բանաստեղծը

Չոպանյանի բնորոշմամբ՝ Թերզյանը «հին չէ» նաև իր ոճի, գեղեցկագիտության մեջ, «իր ժամանակին արտայայտիչն է»՝ «Էապէս ռոմանթիկ»՝ Բայրոնի, Լամարտինի, Միլտոնի, Շելլիի, Մյուսէի, Վինյիի «ու մանաւանդ Հիւլսօյի» աշակերտ, որի դասական ոճով գրված քերթվածներում անգամ «ռոմանթիկ շունչէն բան մը կ'անցնի»: «Խորապէս» ցավ հայտնելով «Ապստամբք»-ի բնագիրն ամբողջապէս մեզ հասած չլինելու համար՝ Չոպանյանը գտնում է, որ «իր

¹⁷ Թ է ր գ ե ա ն. 1929, հ. I, ԽԳ:

¹⁸ Թ է ր գ ե ա ն. 1929, հ. I, ԽԳ–ԽԴ:

հոյակապ էջերէն մեկ քանին» պարունակող այդ քերթվածում «... ոչ միայն Միլտոն կայ, այլ և *Ելոայի Վինեին* ու *Հրեշտակի մը անկումին Լամարթինը*»: Եվ դա, ըստ նրա, բնական է, քանի որ «Ռոմանթիկ շրջանին յաղթական ու համասփիտ րոպէին է որ Թէրզեան կազմուած է»: Եվ, մանաւանդ, իր երկու մեծ նախորդները՝ «այնքան պատկառանքով սիրած իր վարպետը»՝ Ղ. Ալիշանն ու «քնարի իր երեց ընկերը՝ զոր կը պաշտէր»՝ Մ. Պեշիկթաշլյանը, հոգով ու շնչով ռոմանտիկներ էին: Իսկ ինչ վերաբերում է Թերզյանին, ապա նա, Չոպանյանի բնորոշմամբ, «... ա՛յդ շրջանին «նորն» է որ իւրացուցած է և անոր մեծագոյն հայ արտայայտիչներէն մին եղած է»: Եվ տարիներ անց՝ ռոմանտիզմի տեղատվության շրջանում, մինչև անգամ մասամբ օգտվելով գրական այլ ուղղություններից, ոչ միայն չի ձգտել հետևելու «այդ ամբողջ բնաշրջութեան», այլև մնացել է «էապէս ռոմանթիկ, աւելի ճիշդ՝ մնացած է Թէրզեան»: Մինչև վերջ ինքնատիպ մնալու այդ էական հատկանիշի շնորհիվ է, որ նա «շարունակած է մինչև վերջը ի՛ր երգը երգել ...», ահա թե ինչու այսօր էլ նրա լավագոյն քերթվածների մեջ ընթերցողը «ոչինչ կը գտնէ որ «հինգած» թուի, մեռած անցեալի մը պատկանող երեսայ. Անոնք կը յուզեն, կը հմայեն, կ'ազդեն՝ ինչպէս անթառամօրէն կենդանի գեղարուեստական արտադրութիւններ ...»¹⁹:

Թերզյանի ստեղծագործական մտածողության և արվեստի առանձնահատկությունների թվում Չոպանյանը նշում է նաև այն, որ նրա բանաստեղծություններում «գործողութեան բաժինը ուժեղ է, աւելի քան ո և է ուրիշ հայ բանաստեղծի մէջ» և նա «առաջինն է որ վիպերգներ գրած է մեր մէջ, – Թումանեանէն ու Վարուժանէն առաջ»²⁰, որոնք, «քնարերգական ու նկարագրական ճոխ բաժին մ'ունենալով հանդերձ», աչքի են ընկնում նաև «գործողութեան ուժգնութեամբ, արագութեամբ, ճարտարութեամբ»²¹:

Գնահատությունը՝ չափածոյով

1909 թ. Թ. Թերզյանի մահվան լուրի ազդեցության տակ Չոպանյանն իր խորին զգացողություններն ու մտածումներն արտահայտել է նաև «Թովմաս Թէրզեանին» խորագիրը կրող բանաստեղծությամբ²²: Քերթվածն սկսվում է այդ Մեծ փոփոխության հորհրդի մեկնման ակնկալիքով թափանցված տողերով.

*Ու հիմայ որ դուն անդին անցար դըռնէն Խորհրդդին,
Խոհուն ու քա՛ղցըր վարպետ, որ դրախտի մ'մէջ անգիշեր՝
Հոգւոյն անմահ թեւածման կը հաւրայիր սըրտագին,*

¹⁹ Թ է ր գ ե ա ն. 1929, հ. I, ԽԵ:

²⁰ Նշում է «Ապստամբք»-ի, «Հրանտ և Արուս»-ի, «Զարեհ և Նարդիկ»-ի վիպերգերը:

²¹ Թ է ր գ ե ա ն. 1929, հ. I, ԽԵ:

²² Տե՛ս՝ Թէրզիկ. «Ամէնուն տարեցոյցը» (Կ. Պոլիս), 1910, 96–100 (բանաստեղծությունից էջանշումները տրվում են տեքստում):

*Ի՛նչ տեսար, ա՛խ, ի՛նչ գըտար՝ երբ սուգեցար թանձրաստուհի
Անձանթին ծոցը պաղ ...*

Ներքին անթաքույց տագնապով հարց է ուղղում նրան, թե «Արդեօք իրա՞ւ աչուրներդ, հազիւ գոցուած երկրատուր // Արփույն լոյսին, բացուեցան լոյսի մը մէջ մըշտապէս // Շողուն ու քաղցր աւելի քան աշխարհին մեր բոլոր // Լոյսերն աղօտ ...» (96–97): Ու թե՛ն կյանքի Գաղտնիքը նրան մեկնող «ընտրուած» մտքերը փակ են երկրաբնականների համար, բայց իրեն թվում է, որ տեսնում է սիրելի վարպետին՝ «հոյլին մէջ (...) անմահներու կաճառին ...»: Եվ դիմում է նրան խնդրանքով, որ Հիսուսի նման երևա՛ իրենց, խոսի՛ և ասի ու հաստատի՛, «թէ Բուրաստանն այդ վերին // Կա՛յ արդարեւ՝ իր անճառ ծաղկըներովը լոյսէ ...», որ Վերին այդ Աշխարհում չկան Չարիք ու Խավար, Տանջանք ու Ոճիւր և տիրում է միայն Ճշմարտին ու Արդարը, «Գեղեցկութեան գերագոյն հայեցում»-ը: Լռությունն է, սակայն, պատասխանը, ունա՛յն են աղերսանքները. «մըտածման ծա՛յնը մոռալ» հուշում է, որ նա, ում ողբում եք, այլևս «լրացուց իր դերն, եւ այժմ անըզգած // Ծրար մըն է լոկ նիւթի ...» (99):

Սակայն անդրդվելի է Չոպանյան-բանաստեղծի հուսալի մտածումը, քանզի համոզված է՝ ճշմարտությունն այն է, որ.

*Անհադին կեանքն անցաւոր, Ամբողջութիւնն է անմահ:
Կեանքը մէ՛կ է եւ անվերջ, իր ձեւերն են այլազան
Ու վաղանցուկ ...*

Իսկ Յավը տրված է մարդուն՝ իր «հոգիին մաքրագործմանը համար»։ Ուրեմն նա ևս, որ սիրելի ու պաշտելի վարպետն էր Ճշմարտին ու Գեղեցկին, արդեն ստացել է «պըսակն իր սուրբ վաստակին» և «անթառամ կեանքով մը մի՛շտ պիտ'ապրի // Իր երգերուն մէջ աղւոր. Հո՛ն է, հո՛ն է իր հոգին» (100):

Ամբողջական գնահատությունը

Նույն՝ 1909 թ. գրած և «Անահիտ»-ում տպագրած վերը հիշատակված «Թովմաս Թերզեան» հոդվածում Չոպանյանը նշում էր, որ դեռևս չի հավակնում տալ վարպետի ստեղծագործության սպառիչ վերլուծությունը, քանի դեռ հրապարակի վրա չկա նրա բանաստեղծությունների ամբողջական հրատարակությունը։ Իր նախաձեռնությամբ և տքնաջան աշխատասիրությամբ երկու տասնամյակ անց իրականացված երկհատորյակի Առաջաբանում նա վկայում է, որ Թերզյանն իր կյանքի ընթացքում «մէկէ աւելի անգամներ» ցանկացել է գոնե մեկ հատորի մէջ ամփոփել մամուլում և տարբեր ժողովածուներում տպագրված իր քերթվածները, բայց ամեն անգամ, տարբեր պատճառներով, «հետաձգած է այդ ծրագիրը»։ Եվ, ի վերջո, իրագործելով նրա այդ բաղձանքը, գոհունակությամբ նշում է, որ «ներկայ երկու հատորներուն մէջ (...) ամբողջ աշխարհի մը կայ գեղեցկութեան։ Հայ քերթութեան գանձարանին վրայ այս երկու հատորները արքայական պերճութեամբ գոհարակոյտ մըն է որ կը

բերեն անելները»²³: Նրա հավաստմամբ՝ այդ երկու հատորները ոչ միայն հաստատում են «արդարացի սքանչացումը», որին արժանացել էր «այդ ներշնչեալ քնարերգակն» իր ողջության ժամանակ, այլև ներկայացնում են նրան «անելի մեծ, անելի խոր, անելի բազմաձեւ, անելի Հայ, և նոյն իսկ անելի արդիական, ինչ որ կը կարծուէր»: Ըստ այդմ՝ «Թէրգեան մին եղած է ամէնէն լուսաւոր ու ներդաշնակ դէմքերէն որ մեր մէջ երեւցած ըլլան»: Եվ ուրեմն, Չոպանյանի համոզմամբ. «Իր կեանքն ու գործը, երկու բառով կարելի է ամփոփել. ան սիրեց ու երգեց, և սէր, գեղեցկութիւն ու երգ սորվեցուց. Բանաստեղծ եղաւ և ուսուցիչ, բանաստեղծութեան ուսուցիչ, գեղեցկութեան ուսուցիչ. այս է ամէն ինչ որ ըրաւ, և ի՞նչ կարելի է ընել այս աշխարհիս մէջ՝ անելի վեհ ու բարերար»²⁴:

Եզրակացություն

Արշակ Չոպանյանը Թովմաս Թերգյանի անձի և գործի վերլուծությանն ու գնահատությանն անդրադարձել է բազմիցս՝ սկսած 1890-ական թվականների սկզբից՝ քառորդ դարի ընթացքում:

Ըստ Ա. Չոպանյանի՝ թեև Թ. Թերգյանի տաղանդը դրսևորվել է մի քանի ասպարեզներում (բանաստեղծություն, թատերագրություն, թարգմանչություն, գեղագիտություն, մանկավարժություն), այդուհանդերձ, նրա գրական վաստակի գնահատության առանցքը ընդգրկում է մանկավարժությունն ու բանաստեղծությունը:

Ա. Չոպանյանը Թ. Թերգյանին բնութագրել է որպես «արդիւնաւոր մանկավարժ» և «գերազանցապէս ինքնատիպ», «էապէս ռոմանթիկ» բանաստեղծ:

Ի վերջո, բոլոր դիտարկումներն ու գնահատականները Ա. Չոպանյանն ընդհանրացրել է իր կազմած՝ Թ. Թերգյանի «Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ»-ի (1929, Վենետիկ) Առաջաբանում:

Պետրոս Դեմիրճյան – ք. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 4 մենագրության, 200-ից ավելի հոդվածի:

ORCID: 0009-0003-6265-1421. pdemirchyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դալլաքյան Կ. 1987, Արշակ Չոպանյան, Երևան, «Սովետական գրող», 480 էջ [Dallakyan K. 1987, Arshak Chopianian. Yerevan, “Sovetakan grogh”, 480 p. (in Armenian)]:

²³ Թ է ր գ ե ա ն. 1929, հ I, ԾԴ:

²⁴ Թ է ր գ ե ա ն. 1929, հ. I, ԺԱ:

Թերզյան Թ. 1929, Բանաստեղծությանց ամբողջական հավաքածոյ, հ. I (Առաջարան եւ Ծանոթութիւնք, Չոպանեան Ա, էջ ԺԱ-ԾԴ), Վենետիկ-Ս. Ղազար, 455 էջ [Terzian T. 1929, Complete Collection of Poems, V. I (Preface and Introduction, Chohanian A., pp. 11–24). Venice, S. Ghazar, 455 p. (in Armenian)]:

Չոպանեան Ա., Թովմաս Թերզյան. – «Հայրենիք» (Կ. Պոլիս), 28. IX. 1892 [Chohanian A., Tovmas Terzian. – “Hayreniq” (Constantinople), 28. IX. 1892 (in Armenian)]:

Չոպանեան Ա. 1909, Թովմաս Թերզյան. – «Անահիտ» (Փարիզ), թիւ 1–2, էջ 35–39 [Chohanian A. 1909, Tovmas Terzian. – “Anahit” (Paris), № 1–2, pp. 35–39 (in Armenian)]:

Չոպանեան Ա. 1910, Թովմաս Թերզյանին, Թէոդիկ. – «Ամէնուն տարեցոյցը» (Կ. Պոլիս), էջ 96–100 [Chohanian A. 1910, to Tovmas Terzian, Teodik. – “Amenun taretuits” (Constantinople), pp. 96–100 (in Armenian)]:

Չոպանեան Ա. 1934, Հովհաննէս Սազըզեան. – «Անահիտ», թիւ 5–6, էջ 1–18 [Chohanian A. 1934, Hovhannes Sagizian. – “Anahit”, № 5–6, pp. 1–18 (in Armenian)]:

ТОВМАС ТЕРЗЯН В ОЦЕНКЕ АРШАКА ЧОПАНЯНА

ПЕТРОС ДЕМИРЧЯН

Резюме

Ключевые слова: Константинополь, Товмас Терзян, Аршак Чопанян, педагог, поэт, драматург, переводчик.

Аршак Чопанян (1872–1954), известный западноармянский писатель, критик, публицист, переводчик и деятель национальной культуры, начиная с 1890-х годов неоднократно обращался к творчеству выдающегося поэта, драматурга, переводчика, эстетика и педагога Товмаса Терзяна (1840–1909). В статьях Аршака Чопаняна рассматриваются биография Терзяна, его человеческие качества, педагогические способности и творчество в целом. Анализ и оценка творчества и деятельности Т. Терзяна были обобщены А. Чопаняном в Предисловии к «Полному собранию стихов» Т. Терзяна (1929, Венеция).

Петрос Демирчян – д. филол. н., ведущий научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абега НАН РА. Научные интересы: классическая и современная литература. Автор 4 монографий и около 200 статей. ORCID: 0009-0003-6265-1421. pdemirchyan@mail.ru

TOVMAS TERZIAN IN THE ASSESSMENT OF ARSHAK CHOPANYAN

PETROS DEMIRCHYAN

S u m m a r y

Keywords: Constantinople, Tovmas Terzian, Arshak Chopanian, educator, poet, playwright, translator.

Arshak Chopanian (1872–1954), a renowned Western Armenian writer, critic, publicist, translator, and figure of the national culture, beginning from the 1890s, repeatedly turned to the art of outstanding poet, playwright, translator, aesthetician, and educator Tovmas Terzian (1840–1909). Arshak Chopanian, in his articles, studied Tovmas Terzian's biography, his personal qualities, teaching abilities, and art in whole. Analysis and assessment of T. Terzian's art and activity were summarised by A. Chopanian in the Preface to the "Complete Collection of Poems" of T. Terzian (1929, Venice).

Petros Demirchyan – Doctor of Philology, Senior Researcher at the Department of New Armenian Literature of the Institute of Literature after M. Abeghyan, NAS RA. Scientific interests: classical and modern literature. Author of 4 monographs and about 200 articles. ORCID: 0009-0003-6265-1421. pdemirchyan@mail.ru